Զրույցի ընթացքում անդրադարձ եղավ նաեւ Հայ Առաքելական եւ Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ առկա հարաբերություններին, ինչպես նաեւ Հռոմի Սրբազան քահանայապետ Հովհաննես Պողոս Բ պապի Հայաստան կատարած այցին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Մարտի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Թիան Չանչունին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով դեսպանին, կարեւորեց երկու ժողովուրդների միջեւ հաստատված սերտ ու բարեկամական կապերը եւ հույս հայտնեց, որ պրն Չանչունիի պաշտոնավարության շրջանում այդ համագործակցությունն ավելի կամրապնդվի ու կզարգանա:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ երկու ժողովուրդների հոգեւոր կյանքին, ընդգծվեց հոգեւոր կյանքի կարեւոր դերակատարությունը հասարակության մեջ բարոյական-հոգեւոր արժեքների ամրապնդման գործում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մարտի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գումարվեց Գերագույն հոգեւոր խորհրդի ընդլայնված ժողով:

Տերունական աղոթքից հետո Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներին իր օրհնությունը եւ գնահատանքը բերեց Վեհափառ Հայրապետը:

Նախորդ ժողովի արձանագրության հաստատումից հետո խորհրդի անդամները ձեռնամուխ եղան օրակարգային հարցերի քննարկմանը: Գերագույն հոգեւոր խորհրդի նիստին ներկայացվեցին Մայր Աթոռի 2009 թ. գործունեության տեղեկագիրը եւ ֆինանսատնտեսական զեկույցը:

Օրակարգում ընդգրկված էին Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռներին, ներեկեղեցական եւ միջեկեղեցական կյանքին առնչվող հարցեր:

Ժողովում ամփոփվեցին մարտի 16-18-ը Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Կիրիլ Ա Պատ-

բիարքի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին կատարած պաշտոնական այցի արդյունքները: Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Պատրիարքի այցելությանը, որը հերթական անգամ փաստեց երկու Եկեղեցիների միջեւ առկա եղբայրական ջերմ հարաբերությունների եւ սերտ համագործակցության մասին: Գերագույն հոգեւոր խորհրդում գնահատանքով ընդունվեց այցի կազմակերպիչ հանձնախմբի կողմից իրականացված աշխատանքների մասին զեկույցը: Նորին Սրբությունը տեղեկացրեց նաեւ, որ Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Պատրիարքի այցի ընթացքում Կովկասի մահմեդականների առաջնորդ Շեյխ ուլ Իսլամ Փաշա Զադեի եւ Կիրիլ Ա Պատրիարքի անունից փոխանցվել է հրավեր՝ մասնակցելու ապրիլի 26-28-ը Բաքվում կայանալիք ԱՊՀ եւ Բալթյան երկրների հոգեւոր առաջնորդների գագաթնաժողովին: Այս առնչությամբ Վեհափառ Հայրապետը հայտնեց Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներին, որ ընթացակարգային որոշակի հստակեցումներից հետո վերջնական որոշում կկայացվի գագաթնաժողովին Ամենայն Հայոց Կաթողիկոսի մասնակցության վերաբերյալ:

Այնուհետեւ անդրադարձ կատարվեց Վեհափառ Հայրապետի եւ նրա շքախմբի փետրվարի 17-19-ը Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն կատարած այցին: Այցը կազմակերպված էր Երուսաղեմի Հայոց Պատրիարքի ծննդյան 91-րդ, քահանայական ձեռնադրության 70-րդ եւ պատրիարքական գահակալության 20-րդ տարեդարձերի առիթով կազմակերպված միջոցառումներին մասնակցելու եւ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից Պատրիարքին տրված «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանը հանձնելու առիթով: Գերագույն հոգեւոր խորհուրդը, քննարկելով Երուսաղեմի Հայոց Պատրիարքությանն առնչված հարցերը, ողջունեց Հայոց Պատրիարքին Նորին Սրբության բերած առաջարկը՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունում Սրբոց Հակոբյանց միաբանության ընդհանուր ժողով գումարելու վերաբերյալ:

Գերագույն հոգեւոր խորհուրդն ի գիտություն ընդունեց նաեւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության Կրոնական ժողովի ատենապետ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանի զեկույցը Կոստանդնուպոլսի Հայոց Աթոռակից Պատրիարքի ընտրության ընթացքի վերաբերյալ՝ վերահաստատելով փոխանցված տեղեկատվությունը, որ Թուրքիայի իշխանություններին ներկայացվել է Աթոռակից Պատրիարք ընտրելու վերաբերյալ դիմումը՝ սպասելով ընտրության անցկացման համար համապատասխան արտոնության տրամադրմանը:

Ժողովականներին տեղեկացվեց նաեւ, որ կարգալույծ է հռչակվել Արցախի թեմի հոգեւոր սպասավոր Տ. Հակոբ աբեղա Ապրեսյանը՝ կանոնազանց ընթացքի համար: Այսուհետ նա կարգվում է աշխարհականների դասում՝ կոչվելով ավազանի անունով՝ Միրզա Ապրեսյան:

Օրակարգում քննության նյութ դարձավ նաեւ թեմական, ներեկեղեցական վարչա-կառուցվածքային վերափոխումներ իրականացնելու ծրագիրը:

Ժողովն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով եւ աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ